ՎԱՆՔԱՍԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ»

ԼՅՈՒԲԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Արցախյան շարժումից առաջ հայագիտությունը զրկված էր Լեռնային Ղարաբաղում մշակութային հետազոտություններ կատարելու հնարավորությունից: Այսօր այդ հնարավորությունը կա. վերջին տարիներին այստեղ կատարված հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքում ոչ միայն համալրվել է հայկական պատմաճարտարապետական ժառանգությունը, այլև ճարտարապետական հուշարձանների փաստական տվյալների ու ճարտարապետական գիտության ընձեռումների հիման վրա շատ համալիրներ ներկայանում են նոր մեկնաբանությամբ[1]: Այս շարքում է Վանքասարի վաղքրիստոնեական եկեղեցին:

Վանքասարի եկեղեցին գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանում, Ստեփանակերտից Մարտակերտ տանող մայրուղու ձախ կողմում, Վանքասար կոչվող ժայռի գագաթներից ամենաբարձրի վրա: Եկեղեցու այսպիսի տեղադրությունը նրան հնարավորություն է տվել ստանձնել Խաչենագետի ներքնահովտից հարավ ընկած այս հատվածի ծավալային դոմինանտի դերը, որտեղից ընդգրկուն տեսարան է բացվում դեպի Քուր-արաքսյան հարթավայր և Կովկասյան լեռնաշղթա: Նախկինում սա պատմական Ուտիք նահանգում էր[2]:

Եկեղեցու մասին առաջին հպանցիկ հիշատակությունը թողել է Ս. Ջալալյանցը. «Ի գագաթ լերին է աւերակ մենաստանի, զորմէ աւանդեն զոլ առաջնորդարան այսր նահանգի»[3]: Մ. Բարխուդարյանն էլ իր «Արցախ» գրքում բերում է ավանդություններ, և ըստ դրանցից մեկի՝ եկեղեցու կառուցումը վերագրված է Վաչէ Բ իշխանին. «Վաչե Բ շինած է մի խաչաձև մենաստան, որի գլուխն այժմ խոնարհված է ամբողջապես»[4]:

Խորհրդային շրջանում Վանքասարի եկեղեցին առաջինը ուսումնասիրության առարկա է դարձրել և գիտական հանրությանը ներկայացրել Զ. Յամպոլսկին: Իր հրապարակման մեջ նա ներկայացրել է նաև եկեղեցու հատակագիծն ու լուսանկարներ: Սակայն նա, հակառակ այն հանգամանքին, որ ինքն է նաև նշում կառույցի հորինվածքային առանձնահատկությունների նույնականությունը հայկական վաղմիջնադարյան մի շարք այլ

---

[1] *Մշակութային հետազոտություններն Արցախում (այսուհետև՝ Մշակութային...), (կազմող՝ Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան), Երևան, 2009, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005–2010 թթ., Ստեփանակերտ, 2011:*

[2] *Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1969, էջ 75:*

[3] *Ս. Ջ ա լ ա լ ե ա ն ց. Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 344:*

[4] *Մ. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Մունք, Ստեփանակերտ, 1995, էջ 266:*

եկեղեցիների հետ՝ տուրք տալով հայկական հուշարձաններն աղվանական համարելու ադրբեջանական գիտնականների մտայնությանը, առանց հիմնավորման, հուշարձանը համարում է աղվանական[5]: Հուշարձանի մյուս հետազոտողները (Մ. Հասրաթյան[6], Վ. Գրիգորյան[7], Շ. Մկրտչյան[8], Ս. Կարապետյան[9], Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան[10]) Վանքասարի եկեղեցին հայ մշակույթից օտարելու Յամպոլսկու հրապարակմանն արժանի գնահատական և պատասխան են տվել: Սակայն մինչև այսօր հուշարձանի ու նրա «վերականգնման» մանրամասն քննությունը կատարված չէ: Այս հրապարակման մեջ փորձել ենք լրացնել այդ բացը: Հուշարձանի տեղագննումներն ու մանրամասն չափագրությունները նպաստել են Վանքասարի եկեղեցու հատակագծային և ծավալատարածական հորինվածքի ամբողջական ու իրական պատկերի ներկայացմանը և թույլ տվել հասկանալ այդ «վերականգնման» էությունը:

Վանքասարի եկեղեցին հպարտ «բազմել» է ժայռի բարձրադիր գագաթին և իր ճիշտ ընտրված մասշտաբի ու շինաքարի շնորհիվ բնական լանդշաֆտի հետ մեկ ներդաշնակ ամբողջություն է կազմում (նկ. 1): Եկեղեցուց 200 մ ցածր՝ Վանքասար լեռան հարավարևելյան ստորոտում՝ Արցախի Տիգրանակերտի տարածքում է կառուցված մեկ այլ վաղքրիստոնեական տաճար՝ Տիգրանակերտի նորահայտ միանավ եկեղեցին: Տիգրանակերտից հյուսիս՝ մոտ 3 կմ հեռավորությամբ, Խաչենագետի ժայռեղեն ափին է գտնվում վաղքրիստոնեական ժայռափոր-պաշտամունքային համալիրը: Այսպիսի հոյակերտ տաճարների առկայությունը, նաև վաղմիջնադարյան ճարտարապետական մանրամասների՝ խարիսխների, խոյակների, քիվերի, քանդակազարդ քարերի, խաչակիր կոթողների բազմաթիվ օրինակները խոսում են Խաչենագետի ներքնահովտի հայկական դիմագծի և հարուստ հոգևոր ու մշակութային կյանքի մասին[11]:

Միջնադարյան այդ դիմագծի պահպանման և վերականգնման համար, բնականաբար, Խորհրդային Ադրբեջանում ոչինչ չեն արել, ավելին, Վանքասարի եկեղեցին անցյալ դարի 80-ականներին «ադրբեջանական ձևով վերականգնման» ժամանակ լուրջ կորուստներ է կրել (նկ. 2): Առաջին հերթին խաթարվել է հուշարձանի բնական միջավայրը և լանդշաֆտը: Ամեն ինչ սկսվում է հենց եկեղեցու մատույցներից: Եկեղեցի տանող ճանապարհը շեշտված է հսկայածավալ կամարակապ բացվածքով, որը հանգչում է

---

[5] З. Я м п о л ь с к и й. Памятники Кавказской Албании на горе Бешидаг.–«Советская археология», 1960, ¹ 2, с. 246–250.

[6] *Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն. Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ 28, 29:*

[7] *Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հայաստանի վաղմիջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 26, 27:*

[8] *Շ. Մ կ ր տ չ յ ա ն. Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 78:* Ш. М к р т ч я н. Историко-архитектурные памятники Нагорного Карабаха. Ереван, 1988, с. 63–64.

[9] *Ս. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 223–226:*

[10] *Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Հ. Ս ա ն ա մ յ ա ն. Վանքասարի հուշարձանները.– Հուշարձան, Գ, Երևան, 2005, էջ 165–167:*

[11] *Մշակութային..., էջ 40:*

գլանաձև աշտարակների վրա: Սրանք էլ իրենց հերթին պսակվում են կոնաձև վերնամասերով: Եվ այս ամենն ընդամենը նրա համար, որպեսզի շրջակա միջավայրից սահմանազատվի այն տարածքը, որտեղ ժամանակին եկեղեցու շուրջը հոգևոր-մշակութային միջավայրին անհարիր կառուցապատում է իրականացվել: Տարածքը կառուցապատվել էր ժամանցի և զվարճանքի գործառույթ իրականացնող շենքերով: Դրանք արցախյան պատերազմում վնասվել են և վերածվել ավերակների: Համայնապատկերի պահպանության և պատմական միջավայրի վերականգնման համար անհրաժեշտ է ապամոնտաժել լանդշաֆտն աղավաղող այդ ավերակները (նկ. 3):

Ամբողջովին բարձրացվել և սալապատվել է եկեղեցու շրջակայքը: Արդյունքում այն այժմ կանգնած է քառակուսի՝ 16,5 x 16,5 մ չափերի «ամայի» մի հարթակի վրա, որն ամբողջովին ծածկել է ժամանակին եկեղեցու շուրջը ստեղված վաղմիջնադարյան շինարարական մնացորդները և, հավանաբար, գերեզմանոցը: Վաղմիջնադարյան գերեզմանոցի գոյությունն այստեղ ավելի քան հավանական է, քանզի Վանքասարի տիպի բոլոր հուշարձաններն էլ (Թալինի Ս. Աստվածածին, Քարաշամբի Ս. Գևորգ, Այլաբերի և այլ եկեղեցիներ) կառուցված են գերեզմանատներում և, ըստ էության, նաև տոհմային, մեմորիալ կառույցներ, վկայարաններ են և ոչ թե զուտ ծիսական եկեղեցիներ[12]: Սալապատման հետևանքով ծածկվել է նաև եկեղեցու որմնախարսխի աստիճանների մի մասը (հարավարևելյան կողմում որմնախարսխի երկու աստիճաններ են, իսկ հյուսիսարևմտյանում՝ մեկ): Հարթակը երեք կողմերից (բացառությամբ արևելյանը) շրջապատված է հենապատերով, որոնք պսակում են Վանքասարի ժայռի բարձրադիր գագաթը: «Բարեկարգման» մյուս դրսևորումն էլ եկեղեցուց 5 մ ներքև և հյուսիս սկսվող ու 40 մ դեպի սալապատ հարթակը ձգվող աստիճաններն են, որոնք մեջընդմեջ ընդհատվում են հարթակներով (չափերը՝ 2,5 x7,0) (նկ. 4):

Վանքասարի եկեղեցու ծավալատարածական հորինվածքի մասին խոսելը բավական բարդանում է նաև այն պատճառով, որ նախնական հատակագծի վրա վերականգնվել է մի ծավալ, որը չի համապատասխանում նախնական կառույցին: Արդյունքում վաղքրիստոնեական այս նուրբ կառույցը վեր է ածվել անհեթեթ՝ այլափոխված մի զանգվածի՝ որպես վերականգնման և պահպանության անվան տակ իրականացված մշակութային յուրօրինակ վանդալիզմի դրսևորում:

Եկեղեցին ունի խաչաձև հատակագծային հորինվածք և պատկանում է վաղմիջնադարյան փոքր խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիների եռախորան ենթատիպին: Հորինվածքի հիմքը կազմող գմբեթատակ քառակուսին ամփոփված է արևմուտքից ուղղանկյուն, մյուս կողմերից կիսաշրջանաձև խաչաթևերով, որոնք արտաքինից ուղղանկյուն են: Հատակագծային այս հորինվածքի արևելք-արևմուտք առանցքն ունի 10 մ երկարություն, իսկ հյուսիս-հարավը՝ 9,15 մ, որի հետևանքով արևմտյան խաչաթևը մի փոքր (0,85 մ) երկարել է (նկ. 5): Մուտքերը բացված են երեք կողմերի (արևելյանից բացի)

---

[12] *Հայկական ճարտարապետության պատմություն (այսուհետև՝ Հայկական ճարտարապետություն...), հ. 3, Երևան, 2004, էջ 41:*

խաչաթներում, ուր զետեղված են նաև պատուհաններ: Մուտքերի առկայությունը երեք խաչաթներում Վանքասարի եկեղեցու հատակագծային հորինվածքի առանձնահատկությունն է իր խմբի մյուս հուշարձանների համեմատ: Մյուս բոլոր կառույցներում մուտքերի այդպիսի առատություն չի դիտարկվում: Մուտքերի ուղղանկյուն բացվածքները ծածկված են բարավորի կամարաձև քարերով, որոնք պատի հարթության մեջ են և նրա որմածքի օրգանական մասն են կազմում: Բոլոր մուտքերի բացվածքներն իրար հավասար են (1,05 մ): Արևմտյան մուտքի բարավորը ունեցել է խաչաքանդակ[13]: Այսօր այդ հորինվածքից նույնպես միայն հետքեր են մնացել, քանզի այն ևս միտումնավոր եղծվել, հարթեցվել է: Արևմտյան ճակատի վրա նշմարելի են շքամուտքի դրոշմված հետքերը, որոնք խոսում են ժամանակին վերջինիս գոյության մասին: Այն սյունազարդ հորինվածք է եղել, որտեղ սյուները հպվել են եկեղեցու պատին՝ դրանից առաջ գալով, և հենված են եղել որմնախարսխի աստիճաններին: Կամարը նստել է այդ սյուների վրա, որոնք պսակված են եղել խոյակներով: Ամեն կողմում զույգ որմնասյուներ են եղել: Շքամուտքերը մեկական որմնասյուներով հազվադեպ են իրականացվել (Ավանի տաճար), քանզի այս դեպքում դրանց համապատասխանող խոյակները չէին կարող շքամուտքը պսակող կամարի կրունկի քարի և երկթեք ծածկի համար անհրաժեշտ լայնության հենարան ապահովել: Այդ պատճառով հիմնականում մշակվել և իրականացվել են երկու որմնասյուն ունեցող տարբերակները: Վաղմիջնադարում ճակատների ձևավորման հարցում շքամուտքերը կարևոր դերակատարում են ունեցել: Դրանք հիմնականում կառույցների հարավային ու արևմտյան ճակատներում են տեղավորվել և կրկնում են վաղ շրջանի բազիլիկատիպ հորինվածքներում հանդիպող ձևերը: Այսպիսի շքամուտքերը բնորոշ են V–VII դարերի եկեղեցիներին (Թալինի Ս. Աստվածածին, Քարաշամբի Ս. Գևորգ, Այլաբերի ու Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցիներ և այլն)[14] (նկ. 6):

Վանքասարի եկեղեցու բոլոր քարերը կրում են հայերեն տառերի տեսքով վարպետների նշաններ՝ նման Սիսիանի VII դարի տաճարի նշաններին[15]: Հատակի նախնական վիճակի մասին խոսելը հնարավոր չէ, քանզի «նորոգումից» հետո այն ամբողջովին պատվել է վաղմիջնադարին անհարիր փոքր, քառակուսի սալերով (0,4 x 0,4 մ): Արդյունքում՝ արևմտյան կողմում ստորին նշագծումը հավասարվել է հատակի մակերևույթին, և շեմերը բացակայում են: Շեմերի առկայությունը եկեղեցիներում ամրապնդում էր պատերի կապերը հիմքերի հետ դռների խոռոչների տեղերում և ապահովում գետնի մակարդակի վրա գտնվող շենքը մթնոլորտային տեղումների ներթափանցումից:

Կառույցի ծավալատարածական հորինվածքն ու համաչափական համակարգը նույնպես տուժել են: Արդյունքում աղճատվել է եկեղեցու նախնական հորինվածքը: Վանքասարի եկեղեցու ռճական և շինարարական առանձնահատկությունների հետ առնչվող վաղմիջնադարյան բոլոր հուշարձանները

---

[13] *Շ. Մ կ ր տ չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 78:*

[14] *Հայկական ճարտարապետություն..., էջ 266–268:*

[15] З. Я м п о л ь с к и й. *նշվ. աշխ., էջ 249:*

կառուցված են այլ կերպ: Այսպիսի ձևով վերականգնումը ոչ թե չիմացություն, այլ դիտավորություն է հետապնդել:

Ճակատներում չեն շարվել քիվերը: Մինչդեռ հայկական հուշարձանների, մասնավորապես, վաղմիջնադարյանների համար ինչպես կոնստրուկտիվ, այնպես էլ ճարտարապետական մշակման գործում խիստ կարևոր են այս տարրերը: Դրանք առկա են Վանքասարի եկեղեցու հետ առնչվող բոլոր կառույցներում[16]: Բացի այդ, Տիգրանակերտի վաղքրիստոնեական եկեղեցու պեղումների ժամանակ գտնվել են ատամնաշարերով քիվերի բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են այն մասին, որ Վանքասարի եկեղեցու կառուցումից էլ առաջ այստեղ եղել են տաճարներ, որոնք ունեցել են վաղմիջնադարյան կառույցներին բնորոշ բավական զանգվածեղ քիվեր: Վանքասարի եկեղեցում, դժբախտաբար, ձևափոխված են նաև պատուհանների բացվածքները. դրանք բոլորը շարվել են ուղղանկյունաձև՝ մինչդեռ վաղքրիստոնեական բոլոր գուգահեռներում կամարաձև վերջավորությամբ լուսամուտներ են (նկ. 7):

Վաղմիջնադարյան եկեղեցիներում դեկորատիվ հարդարանքը ներկայացված է նաև լուսամուտների պսակներով, որոնք պահպանվել են վերևում արդեն նշված և այլ հուշարձաններում: Լուսամուտների պսակները շրջանցում էին դրա վերնամասը և շատ հաճախ զգալի ելուստ ունեին, որոնք պատերի հարթությունների վրա լուսաստվերային տպավորիչ հանգույցներ էին ստեղծում: Հարդարանքի տարր լինելուց զատ, սրանք ունեին նաև որոշակի կոնստրուկտիվ նշանակություն ու կոչված էին ապահովելու պատի մակերեսով հոսող ջրերի հեռացումը և կանխելու բացվածքից դեպի ներս թափանցումը: Այլափոխվել են նաև կոնստրուկտիվ հանգույցների (տրոմպներ, գմբեթարդներ, թաղ, գմբեթ) իրականացման եղանակները: Խաչաթևերից արևմտյան ուղղանկյուն խորանը ծածկված է գլանաձև թաղով, իսկ մյուս՝ կիսաշրջանաձև խորանները՝ գմբեթարդներով: «Նորոգված» գմբեթարդներն իրականացված են հարթ քարերով, մինչդեռ վաղմիջնադարյան հայ քարագործ վարպետներն ու ճարտարապետները կատարելապես էին տիրապետում այդ կոնստրուկտիվ հանգույցն իրականացնելու տեխնիկային և դրանք շարել են միակոր՝ ոչ թե հարթ քարերով: Հարթ քարերով իրականացված թաղը, գմբեթարդներն ու գմբեթը խաթարել են կառույցի նախնական տեսքը, որը հարիր չէ վաղմիջնադարյան կառուցողական արվեստին: Գմբեթատակ քառակուսին պահող կամարակիր որմնասյուների խոյակները շատ փոքր ելուստ ունեցող իմպոստներ են և ունեն քանդակազարդ քիվեր: Վանքասարի եկեղեցում անկյունային փոխանցումը տրոմպային է եղել, որը վերականգնվել է որպես առագաստային, այն էլ սխալ իրականացմամբ (նկ. 8): Նախնական տարբերակում գմբեթատակ տարածությունը կազմվել է խաչաթևերի պարզ հպման միջոցով, որոնց եզրային երկշերտ կամարներն իրենց վրա են կրել գմբեթատակ քառակուսին: Տրոմպները տեղադրված են եղել գմբեթակիր կամարների վերին հարթություններին համապատասխանող որմածքի հորիզոնական շարքի վրա և դրանց թռիչքը համարյա բոլոր համաժամանակյա

[16] *Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 23–24:*

նույնատիպ կառույցներում փոքր է գմբեթակիր քառակուսուն ներգծված ութանիստի կողից: Արդյունքում՝ թմբուկի անկյունային նիստերն ավելի նեղ են ստացվել, իսկ հիմնական ուղղություններին համապատասխանողներն՝ ավելի լայն: Վանքասարի եկեղեցում նույնպես այդպես է և, բարեբախտաբար, այս տեղում «վերականգնողները» հարազատ են մնացել տեկտոնիկ համակարգին: Տրոմպները վաղքրիստոնեական նմանատիպ կառուցվածքներում հանդիպում են ինչպես միաշերտ, այնպես էլ երկշերտ: Դժվար է ասել, թե Վանքասարի եկեղեցու նախնական կառույցում դրանք ինչպիսին են եղել: Դրանք պարփակվել են գմբեթակիր քառակուսու անկյունային մասերում՝ պրիզմայաձև պատվանդաններում, որոնք ծածկված են եղել երկլանջ կղմինդրապատ ծածկերով, և որոնք իրենց նախնական ձևերով պահպանվել են Կարմրավորում[17]: Այս պատվանդանները փոխանցող տարր են խաչաթևերի և թմբուկի բազմանիստ ծավալի միջև: Սրանց ճակատներին հպված են ուղղանկյուն խաչաթևերի ծածկերը, որոնք Վանքասարի եկեղեցում երկթեք են՝ այսօր սալածածկ, իսկ ժամանակին՝ ինչպես վաղմիջնադարյան համաժամանակյա համարյա մյուս բոլոր կառույցներում, կղմինդրածածկ են եղել: Եկեղեցու թմբուկն ութանիստ է, որի չորս անկյունային կողերը մյուսներից ավելի նեղ են և ծածկված են բրգաձև վեղարով: Այն ժամանակին կղմինդրապատ է եղել, բայց վերակառուցվել է սալածածկ: Այսօր բոլոր ճակատներում (հյուսիսայինից բացի) վերակառուցվել է նաև երկթեք կտուրների հարթությունների հատման գագաթնագծի ճակտոնի քանդակազարդ (թերևս, ձիու նմանվող) քարը, որն ավելի պահպանված է արևելյան կողմում:

Վանքասարի եկեղեցու հորինվածքը ոչ միայն հայկական, այլև համաքրիստոնեական ճարտարապետության մեջ ուշագրավ երևույթ է: Ուսումնասիրությունները պարզում են նաև, որ խաչաձև հորինվածքներ այլ տեղերում նույնպես կառուցվել են, որոնք, սակայն, հռոմեական, բյուզանդական ճարտարապետության մեջ հիմնականում առնչվում են դամբանային թեմայի հետ և շատ տարածում չունեն: Խաչի ձևով այդ կառույցները նախատեսված չէին ծիսական արարողությունների համար: Հռոմեական ճարտարապետության մեջ գմբեթավոր հորինվածքները հիմնականում զարգացել են ութանիստ և բոլորաձև հիմք ունեցող կառուցվածքային լուծումներով (բացառություն են կազմում Ս. Սիկստի և Ս. Ցիցիլիայի դամբարանները, որոնք եռաբսիդ հորինվածքներ են)[18]: Բյուզանդական ճարտարապետության մեջ ևս պարզ խաչաձև կառուցվածքները հիմնականում վերաբերում են դամբանային ճարտարապետությանը, և խաչաձևությունը դիտվում էր որպես խաչի խորհրդանշան: Դրանք գործառույթային նշանակություն չունեին՝ այստեղ ծիսական արարողություններ չէին իրականացվում[19]: Բյուզանդիայում տարածված էին նաև խաչաձև մկրտարանները, որոնք, սակայն, ինչպես նկատել են ուսումնասիրողները, հստակ թվագրություն չունեն և վիճահարույց է դրանց վաղ

[17] *Հայկական ճարտարապետություն..., էջ 34:*

[18] A. G r a b a r. Martyrium, Recherches sur le culte des reliques et l'art chre'tien antique, vol. 1. Paris, 1946, p. 60-61.

[19] E. E b e r s o l t. Monuments d' architecture Byzantique. Paris, 1934, p. 41.

շրջանին պատկանելությունը[20]: Խաչաձև դամբանային հորինվածքներ հանդիպում են նաև Սիբիրյում, որտեղ նույնպես քառաթևության մեջ աբսիդները բացակայում են[21]: Այս հորինվածքներում ակնհայտ է, որ կառուցողները էական դժվարություններ են ունեցել կոնստրուկտիվ տեկտոնիկ համակարգերում, մասնավորապես, քառակուսի հիմնատակի վրա գմբեթ բարձրացնելու գործում: Այդ պատճառով խուսափել են տրոմպային և առագաստային փոխանցումներից ու դրանք փոխարինել են արխիտրավային հեծաններով կամ էլ աշխատել քառակուսի հիմնատակն արդեն հատակագծում ութանիստի վերածելու ուղղությամբ: Հայաստանում, հակառակը, քանի որ եկեղեցու ներսում արգելված էին թաղումները և սարկոֆագ-քարատապանների տեղադրումը, այդպիսի կառույցները դառնում էին մեմորիալ հուշարձաններ՝ կառուցված մահացած իշխանի գերեզմանի վրա կամ նրա մոտ, որտեղ տարին մի քանի անգամ ծիսակատարություններ էին արվում: Այդ պատճառով էլ հայկական եկեղեցիներում առաջանում էր աբսիդի անհրաժեշտությունը: Այս մասին են խոսում նաև այդ եկեղեցիների փոքր չափերը: Դրանք կարող են տեղավորել սահմանափակ քանակությամբ մարդիկ: Կարևոր էր և այն հանգամանքը, որ նմանատիպ կառույցներում հատակագծային ու ծավալային ձևերում դրսևորված է քրիստոնեության խորհրդանիշը՝ խաչը:

Վանքասարի եկեղեցու ծավալատարածական հորինվածքն ավելի մոտ զուգահեռներ ունի վրացական հուշարձաններում, որոնցից պահպանվել են սակավաթիվ օրինակներ: Այս հուշարձաններից ամենավառը Սամցևրիսին է: Ուղղանկյուն խաչաթևերով VII դարի այս եկեղեցին ինչպես իր հատակագծային, այնպես էլ ծավալատարածական ու կոնստրուկտիվ լուծումներով ավելի մոտ է հայկական եկեղեցիներին: Այս հուշարձանի և Վանքասարի եկեղեցու միակ կառուցվածքային տարբերությունն այն է, որ այստեղ խաչաթևերում կա միայն մեկ խորան, և տրոմպներն էլ ունեն ավելի բարձր դասավորություն: Արդյունքում՝ ստացվում է հորինվածքի նույնական տիպի կերպարային երկու տարբերակ: Վանքասարի համեմատությամբ Սամցևրիսիում թմբուկը բավական ցածր է[22]:

Այսպիսով՝ խաչաձև, կենտրոնագմբեթ, եռախորան փոքր եկեղեցիները համաքրիստոնեական երևույթ են, սակայն ավելի բազմազան դրսևորումներ և տարածում են ունեցել Հայաստանում:

Վանքասարի եկեղեցին տուժել էր նաև արցախյան պատերազմից: Արևմտյան ճակատում՝ բարավորից վերև արկը բավական մեծ խոռոչ էր բացել, որը սպառնում էր պատի կայունությանը: 2011 թ. աշնանը ԼՂՀ Զբոսաշրջության վարչությունը մաքրման, ամրակայման և բարեկարգման աշխատանքներ է իրականացրել այստեղ: Մասնակի ամրակայման աշխատանքներն ավարտվել են 2012 թ. հունվարին, և եկեղեցու գմբեթին տեղադրվել է խաչ: Վերաշարվել է արևմտյան ճակատի քանդված մասը:

---

[20] А. Я к о б с о н. Средневековый Крым. М.–Л., 1964, с. 24.

[21] *Հայկական ճարտարապետություն…, էջ 47:*

[22] Н. С е в е р о в. Самцевриси.– «Ars Georgica», 1948, ¹ 2, с. 7–11; Н. Д ж а н б е р и д з е, И. Ц и ц и ш в и л и. Архитектура Грузии от истоков до наших дней. М., 1976, с. 47, 48, рис. 43.

Յավոք, այս վերանորոգումները նույնպես զերծ չեն սխալներից: Արհեստականորեն փոքրացված են քարերի չափերը: Բացվածքներում տեղադրվել են մետաղական դռներ (նկ. 9): Ինտերիերում՝ արևելյան խորանում, վերականգնվել է բեմը, որն իր համաչափություններով նույնպես հարիր չէ վաղմիջնադարյան կառուցողական արվեստին: Կարծում ենք, սակայն, որ այսպիսի աղավաղված ծավալի վրա հավելումներ անելն ավելորդ էր:

Գտնում ենք, որ հրատապ անհրաժեշտություն է Վանքասարի եկեղեցուն վերադարձնել իր նախնական կերպարը (նկ. 10)՝ քանդելով և վերակառուցելով այն: Նկատենք, որ արխիվային նյութերում հիշատակվում է Շուշիի մոտ գտնվող եկեղեցու մասին և բերվում է դրա նկարը, որը դասական խաչաթև կենտրոնագմբեթ եկեղեցի է[23]: Քանի որ մատենագրության մեջ Շուշիի մոտ այդպիսի եկեղեցու մասին ոչ մի վկայություն չկա, ավելի քան հնարավոր է թվում, որ դա կարող էր Վանքասարի եկեղեցին լինել: Բացի այդ, վերը ներկայացված փաստական կռվանների, համեմատական (մասնավորապես Քարաշամբի, Այլաբերի, Թալինի Ս. Աստվածածին եռախորան եկեղեցիներ) վերլուծության, տարածաշրջանի վաղմիջնադարյան հարուստ մշակութային շերտի և ճարտարապետական համալիրների համադրության արդյունքում հնարավոր և անհրաժեշտ է ներկայացնել պատմության իրատեսական պատկերը, աղվանական - ադրբեջանական կապի և ընդհանրության «տեսության» ու հայ ժողովրդի արցախյան հատվածի ստեղծած նյութական մշակույթի հուշարձաններն աղվանական համարելու վարկածի ողջ սնանկությունը:

Նկ. 1. Վանքասարի եկեղեցին այսօր (լուսանկարը՝ Հրայր Բազեի):

[23] *Հ. Ե ր ե մ ե ա ն. Գրական պատմութիւն եւ գեղեցիկը, Վենետիկ, 1915:*

Նկ. 2. Վանքասարի եկեղեցին ադրբեջանական
□վերականգնման□ ընթացքում (լուսանկարը՝ Ս. Կարապետյանի, 1986 թ.):

Նկ. 3. Վանքասարի եկեղեցու շրջակայքի ժամանակակից պատկերը:



Նկ. 4. Վանքասարի եկեղեցու գլխավոր հատակագիծը: 0.Վանքասարի ժայռը, 1.Վանքասարի եկեղեցին, 2. Խճասալե հարթակ, 3. Եկեղեցի տանող աստիճանահարթակներ, 4. Կառույցների



Նկ. 5. Վանքասարի եկեղեցու հատակագիծը (չափագրությունը՝ Լ. Կիրակոսյանի):



Վանքասար



Մաստարա. Ս. Հովհաննես

Քարաշամբ. Ս. Գևորգ



Թալին. Ս. Աստվածածին

Նկ. 6. Վաղքրիստոնեական շքամուտքեր:

Վանքասար

Քարաշամբ. Ս. Գևորգ



Թալին. Ս. Աստվածածին

Պեմզաշեն

Նկ. 7. Վաղքրիստոնեական եկեղեցիների քիվեր և լուսամուտներ:

Վանքասար





Քարաշամբ. Ս. Գևորգ

Թալին. Ս. Աստվածածին

Նկ. 8. Վաղքրիստոնեական եկեղեցիների գմբեթարդներն ու տրոմպները:

Նկ. 9. Վանքասարի եկեղեցին 2011 թ. նորոգումից հետո:



Նկ. 10. Վանքասարի եկեղեցու նախնական տեսքը (արևմտյան ճակատ և կտրվածք. վերակազմությունը՝ Լ. Կիրակոսյանի):

АРХИТЕКТУРА ЦЕРКВИ ВАНКАСАР И ЕЕ АЗЕРБАЙДЖАНСКАЯ «РЕКОНСТРУКЦИЯ»

ЛЮБА КИРАКОСЯН

Р е з ю м е

После Арцахского движения на освобожденных территориях были созданы благоприятные условия для исследования древней и средневековой культуры Нагорного Карабаха. Стало также возможным сделать тщательные обмеры, исследовать и представить полную картину плана и объемно-пространственной композиции церкви Ванкасар и выявить беспочвенную сущность азербайджанской «реконструкции». Памятник находится в Мартакертском районе Нагорно-Карабахской Республики, по левую сторону дороги, ведущей из Степанакерта в Мартакерт, на самой высокой вершине горы Ванкасар. Церковь относится к раннехристианскому малому крестокупольному, трехапсидному типу церквей. Своей планировкой и объемно-пространственной композицией она очень похожа на церкви Талина, Айлабера и Карашамба в Армении. Западный вход имел высеченную перемычку крестообразной композиции и знаки мастера в виде армянских букв на стенах. Некоторые из них сохранились по сей день и избежали азербайджанской «реконструкции». Вопреки всем этим фактам церковь объявили албанской.

Более того, в 80-х годах прошлого века ее «реконструировали», намеренно пренебрегая конструкционными и пропорциональными особенностями, присущими данному периоду. В результате, это раннехристианское изящное строение превратилось в архитектурный нонсенс и сегодня создались серьезные сложности для восстановления изначального вида памятника. Однако фактические аргументы, аналогичный материал, богатый раннехристианский слой района и сравнение архитектурных памятников позволяют представить изначальный вид церкви Ванкасар и предложить ее восстановление. Этот проект даст ответ «теории» албано-азербайджанской связи и общности и всем попыткам присвоить памятники материальной культуры арцахской части армянского народа.

THE ARCHITECTURE OF VANKASAR CHURCH AND ITS AZERBAIJANIAN "RECONSTRUCTION"

LYUBA KIRAKOSYAN

S u m m a r y

After the liberation of the territories of Nagorno-Karabakh it became fully available to investigate and preserve antique and medieval monuments of Artsakh. It also became possible to investigate the surroundings of Vankasar Church and thoroughly measure it introducing the whole picture of the plan and spatual composition of the church as well as to understand the idea of Azerbaijanian poor "reconstruction". The church of Vankasar is situated in the Martakert region of Nagorno-Karabakh Republic on the left side of the highway from Stepanakert to Martakert, on the highest peak of Vankasar mountain. This small church of Early Middle Ages belongs to the cross like, central domed, three winged type of churches. Its plan and spatual composition is like the ones in Talin, Aylaber and Karashamb churches on the territory of the Armenian Republic. The western entrance of the church has a finely curved arch with cross-like composition and signs of the architect in Armenian like letters on the stones. Some of them still exist and are in their places and have survived the Azerbaijanian "reconstruction". Notwithstanding these facts the church was regarded as a Caucasian Albanian one. Moreover, in the 80s of the last century the Azerbaijanians reconstructed it neglecting on purpose its constructional and proportional features which were characteristic of the period. As a result this fine early Christian church has become a mass of an architectural nonsense. The "fargoing" Azerbaijanian political project brought about serious difficulties in reconstructing the original plan of the monument. Yet, factual arguments, analogical material, rich layers of early medieval culture and similarities of architectural monuments in Armenia enable us to introduce the original form of Vankasar Church and suggest its reconstruction. This project will give an answer to the so-called theory of Caucasian Albanian-Azerbaijanian relationship and to all attempts to call Azerbaijanian the material culture and heritage left by the Armenian people of Artsakh.